Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-621[4]-03.10.2014-ՏՀ-010/2

Հայաստանի հանրապետության
օրենքը

«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի՝

1) 4-րդ մասը՝

ա. «արտոնագրային վճարի վճարում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին արտոնագիրը տրամադրվում է սույն մասով սահմանված կարգով՝ առանց արտոնագրային վճարի վճարման:»,

2) 5-րդ մասը՝

ա. «արտոնագրային վճարի վճարում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով անհատ ձեռնարկատիրոջը արտոնագիրը տրամադրվում է սույն մասով սահմանված կարգով՝ առանց արտոնագրային վճարի վճարման:»:

Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածը՝

1) 4-րդ մասում «տույժերի հետ միասին» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը,

2) 6-րդ և 7-րդ մասերում «չափով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերի» բառերը,

3) 9-րդ մասում «չվճարելու դեպքում» բառերից հետո լրացնել «(բացառությամբ «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի)» բառերը,

4) լրացնել հետևյալ բովանդակության նոր՝ 10-րդ մասով.

«10. «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, արտոնագրային վճարից ազատված գործունեության տեսակների մասով սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերով նախատեսված խախտումները կատարած անձանց նկատմամբ կիրառվում է նախազգուշացում: Հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, արտոնագրային վճարից ազատված գործունեության տեսակների մասով սույն հոդվածի 4-րդ, 6-րդ և 7-րդ մասերում նախատեսված խախտումները կատարելու դեպքերում արտոնագրային վճարից ազատված գործունեություն իրականացնող անձինք հարկային մարմնի կողմից խախտումն արձանագրելու օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 1-ից դադարում են օգտվել «Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ արտոնագրային վճարից ազատման արտոնությունից, և գործունեության այդ տեսակի մասով արտոնագրային վճարը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:»,

Հոդված 3. Օրենքի 8-րդ հավելվածի 6-րդ կետը՝

1) «արտոնագրային վճարի վճարում» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն կետի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի» բառերը,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Սահմանամերձ գյուղական համայնքներում իրականացվող գործունեությունը հարկերից ազատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն արտոնագրային վճարից ազատված գործունեության մասով արտոնագիրը տրամադրվում է սույն կետով սահմանված կարգով՝ առանց արտոնագրային վճարի վճարման:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին», «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթ վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Հ/Հ	Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
«Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
1.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Սամվել Ֆարմանյան, Վարդան Այվազյան Միքայել Մելքումյան, Նաիրա Զոհրաբյան Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան	Առաջարկվում է՝ 1) վճարված եկամտային հարկի հետ վերադարձման համակարգը տարածել նաև անհատական բնակարանային շինարարության շրջանակներում կառուցվող բնակարանների կամ անհատական բնակելի տների ձեռք բերման գործարքների վրա, 2) նախագծից հանել այն դրույթը, որի համաձայն, ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկը հետ է վերադարձվում բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից ձեռքբերված բնակարանների մասով, 3) նախագծի 1-ին հոդվածի առաջին մասը վերախմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Սույն օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով վճարված) եկամտային հարկը հետ է վերադարձվում Հայաստանի Հանրապետության տարածքում բնակարանի ձեռքբերման նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից սույն օրենքը ուժի մեջ մտնելուց հետո ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանն ուղղված հիպոթեքային վարկի համար վճարվող տոկոսների չափով, բայց ոչ ավելի, քան՝»:	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնց համաձայն, վճարված եկամտային հարկի հետ վերադարձման համակարգը տարածվում է նաև անհատական բնակարանային շինարարության շրջանակներում կառուցվող անհատական բնակելի տների ձեռք բերման գործարքների վրա:

2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյան	Առաջարկվում է վճարված եկամտային հարկը հետ վերադարձնելու փոխարեն աղբյուրի մոտ համապատասխան գումարի չափով պակասեցնել բյուջե վճարման ենթակա եկամտային հարկի գումարը:	Գտնում ենք, որ նախագծով ներկայացված մոտեցումն առավել արդյունավետ է, քանի որ՝ 1) այն հնարավորություն կընձեռի համախմբել միաժամանակ մի քանի գործատուներից աշխատավարձ ստացող անձի կողմից վճարված եկամտային հարկի գումարները և այդ հանրագումարը չգերազանցող չափով վճարված եկամտային հարկի գումարը եռամսյակային պարբերականությամբ հետ վերադարձնել ֆիզիկական անձին, 2) նախագծով ներկայացված մոտեցումը վարչարարական առումով առավել պարզ է, քանի որ առաջարկվող տարբերակի պարագայում անհրաժեշտ կլինի վերահսկողություն իրականացնել տարբեր աղբյուրներից պարբերաբար ստացվող եկամուտներից կատարվող նվազեցումների նկատմամբ, 3) ներկայացված առաջարկությունը չի հիմնավորվում նաև միջազգային փորձի տեսանկյունից:
«Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
3.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան	Առաջարկվում է հստակեցնել նախագծի 5-րդ հոդվածի ա, բ և գ կետերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հղում է կատարվում նախագծի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և (կամ) 3-րդ կետերին, բայց նախագծի 6-րդ հոդվածում կետեր չկան:	Նախագծում կատարված հղումները վերաբերում են մայր օրենքի տեքստին և ոչ թե նախագծի տեքստին:
4.	ՀՀ ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյան	Առաջարկվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.2-րդ հոդվածով նախատեսված տուգանքը՝ հարկային հաշվի լրիվ արժեքով հատուցման գումարի (ներառյալ՝ ԱԱՀ-ի գումարը) կրկնակիի չափով, բայց ոչ պակաս 5 միլիոն դրամից, կիսով չափ կրճատել և սահմանել ոչ պակաս, քան 2.5 միլիոն դրամից:	«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 43.2-րդ հոդվածով նախատեսված տուգանքը նախատեսված է ոչ թե անզգուշորեն, այլ դիտավորությամբ կատարվող գործողության համար, այն է՝ ՀՀ կառավարության սահմանված կարգի խախտմամբ կամ ապօրինի ձեռք բերված կամ պատճենահանված ձևերի լրացմամբ հարկային հաշվի դուրս գրում: Այս առումով, տուգանքի մեծությունը երկու անգամ նվազեցնելը նպատակահարմար չէ:
5.	ՀՀ կառավարություն	Առաջարկվում է նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ կետով օրենքի 23-րդ հոդվածում լրացվող նոր	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:

		պարբերություններից վերջինում «այն անձին» բառերը փոխարինել «այն ռեզիդենտ անձին» բառերով:	
«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
6.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան	Առաջարկվում է «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «Սահմանամերձ գյուղական համայնքներում» բառերը փոխարինել «Սահմանապահ և մինչև 300 բնակիչ ունեցող համայնքներ» բառերով:	Կարծում ենք, որ նախագծով ներկայացված մոտեցումը առավել արդարացի է, քանի որ այն հնարավորություն է ընձեռում արտոնությունները կիրառել նաև ՀՀ կառավարության կողմից հաստատվող ցանկում ներառված այն սահմանամերձ գյուղական համայնքների մասով, որոնք ունեն 300-ից ավելի բնակիչներ:
«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ			
7.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Հեղինե Բիշարյան, Հովհաննես Մարգարյան	Առաջարկվում է՝ 1) «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «0.15 տոկոսը» բառերը փոխարինել «0.10 տոկոսով» բառերով, 2) «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «0.15 տոկոսը» բառերը փոխարինել «0.05 տոկոսով» բառերով, 3) «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «0.15 տոկոսի չափով» բառերը փոխարինել «0.10 տոկոսի չափով» բառերով:	Նախագծերով ներկայացված՝ տույժի հաշվարկման նոր դրույքաչափը՝ օրական 0.15 տոկոս, ավելի հիմնավոր է, քանի որ այն հավասար է հարկերի վճարումն օրենքով սահմանված ժամկետից ուշացնելու դեպքերում հաշվարկվող տույժի օրական չափին:
8.	ՀՀ ԱԺ պատգամավորներ Միքայել Մելքումյան, Նաիրա Զոհրաբյան	Առաջարկվում է փաթեթից հանել «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, քանի որ այն գրեթե նույնությամբ կրկնում է 2013 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ներկայացված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որն արդեն գտնվում է երկրորդ ընթերցման	Նախագծերի փաթեթով ներկայացված՝ «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով, ի տարբերություն ՀՀ ԱԺ պատգամավոր Միքայել Մելքումյանի կողմից ներկայացված օրենսդրական նախագծի, տույժերի հաշվարկման անցումային հարաբերություններն ամբողջությամբ

		փուլում:	կարգավորված են: Բացի այդ, նախագծով առաջարկվում է նվազեցնել նաև պաշտոնատար անձանց նկատմամբ տույժերի հաշվարկման դրույքաչափը ու սահմանափակել տույժերի հաշվարկման ժամանակահատվածը:
	«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծի վերաբերյալ առաջարկություններ չկան:		